ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/73

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ս. Խաչատրյան
«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 21.04.2022թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-12-րդ, 14-րդ, 15-րդ, 17-19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 21.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 22.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/73 համարի ծածկագիրը:

29.04.2022թ.-ին, 06.05.2022թ և 13.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.05.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.05.2022թ.-ին:

2. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 21.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կահույքի /կահույքի/ ձեռքբերման նպատակով 2022-04-01 հրապարակել է ԵՔ-ԷՍՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով աճուրդի ընթացակարգ:

Ընթացակարգը իրականացվել է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով հայտ է ներկայացրել և մասնակցել նաև Ֆոտոն ՍՊԸ-ն և Զուզեպպե ՍՊԸ-ն:

Սակայն Զուզեպպե ՍՊԸ-ն հայտը ներկայցնելու, այսինքն մասնակցելու օրվա դրությամբ փաստացի ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում /սև ցուցակում/:

eauction.armeps.am համակարգի թերության կամ ոչ կատարյալ լինելու պատճառով այդ կազմակերպությունը մասնակցել է աճուրդին, դեռ ավելի մասնակցելով բոլոր 23 լոտերին, միտումնավոր, աճուրդը խաթարելու, ինչպես նաև այլ մասնակիցների գները արհեստականորեն իջեցնելու դիտավորությամբ կատարել է գնի իջեցումներ բոլոր լոտերով, իսկ որոշ լոտերի մասով ճանաչվել է նաև առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մասնակիցների կողմից կատարված աճուրդային նվազեցումները կարող եք տեսնել /https://eauction.armeps.am/hy/public/tender details/tid/17499/code/lLXVlC3Ut9SxlYPUsdWKlYHUsi0yMi8xMTQ=/ հղմամբ: Ծավալուն լինելու պատճառով այն չի արտացոլվում սույն բողոքի տեքստում:

Ուսումնասիրելով աճուրդի ընթացքը ակնհայտ է դառնում, որ Ջուզեպպե ՍՊԸ-ի գործողությունների դիտավորությունը աճուրդը խաթարելու համար:

Սակայն 14.04.2022թ-ին գնահատող հանձնաժողովը N 4 արձանագրության համաձայն չկայացած է հայտարարել միայն 1-րդ, 5-րդ, 13-րդ, 16-րդ, 23-րդ չափաբաժինները, հաշվի չառնելով այն, որ այդ ընկերության գործողությունների արդյունքում տուժել են նաև մյուս ընկերությունները, խախտվել է վերջիններիս գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գտնում ենք, որ վերոնշյալի պատճառով խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և 7-րդ մասով սահմանված պահանջները, այն է.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք,

այն է՝ ..

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:»:

Ելնելով վերոգրյալից, «Ֆոտոն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-12-րդ, 14-րդ, 15-րդ, 17-19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 06.05.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով ընթացակարգի ներկայացված բողոքի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝

Պարտավորեցնել ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114 ծածկագրով աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 2, 3, 4, 6-12, 14, 15, 17-19-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած կամ ընթացակարգի բոլոր մասնակիցներին՝ բացառությամբ Զուզեպպե ՍՊԸ-ի, հրավիրել միաժամանակյա բանակացությունների էլեկտրոնային աճուրդի բացման ժամանակ հրապարակված մեկնարկային գներով:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-12-րդ, 14-րդ, 15-րդ, 17-19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած կամ ընթացակարգի բոլոր մասնակացներին՝ բացառությամբ «Զուզեպպե» ՍՊԸ-ի, հրավիրել միաժամանակյա բանակացությունների էլեկտրոնային աճուրդի բացման ժամանակ հրապարակված մեկնարկայիև գներով:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7181-2022 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 21.04.2022թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն 26.04.2022թ.-ին թիվ 01/8895-2022 ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում գտնվող ԳԲՔԱ-ԼՕ-2022/73 գործով «Ֆուտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ բողոքաբեր) կողմից 21.04.2022 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման հայտ է ներկայացրել «Ջուզեպպե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Էլեկտրոնային աճուրդի հակադարձ նիստը կայացել է www.eauction.armeps.am 12.04.2022 թվականին ժամը 09:30-ին:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտերը գնահատելիս 14.04.2022 թվականի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Ջուզեպպե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրության 3-րդ կետով 1-ին, 5-րդ, 13-րդ, 16-րդ և 23-րդ չափաբաժինների մասով (հակադարձ աճուրդի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ջուզեպպե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը) գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում»:

ՀՀ կառավարության «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած.»:

Վերոգրյալ իրավանորմերով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները բխել են «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներից և իրավաչափ են:

Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ «Ջուզեպպե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իր մասնակցությամբ, դիտավորությամբ խաթարել է մյուս մասնակիցների (ենթադրյալ) իրավունքները և այդ իսկ հիմքով պահանջում է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, ապա՝ նման իրավական լուծում նախատեսված չէ գործող օրենսդրությամբ, ավելին՝ գտնում ենք, որ հակադարձ աճուրդին մասնակցած մասնակիցները գները նվազեցնում են ինքնուրույն՝ հաշվի առնելով իրենց շահերը և ակնկալվող շահույթները:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում ենք գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու հիմքով:»

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 11.04.2022թ.-ին ժամը 09:30-ն ներառյալ, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 12.04.2022թ.-ին ժամը 09:30-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ից 23-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Ջուզեպպե» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ուսումնասիրելով «Ջուզեպպե» ՍՊԸ-ի հայտը, պարզել է, որ Մասնակիցը 06.04.2022թ.-ի

դրությամբ ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 5-րդ, 13-րդ, 16-րդ և 23-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի:

vi. eauction@armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 3-րդ, 4-րդ, 6-ից 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Ջուզեպպե» ՍՊԸ-ն կատարել է գնային առաջարկի նվազեցում, սակայն որի արդյունքում «Ֆոտոն» ՍՊԸ-ն է ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

vii. www.gnumner.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն 06.04.2022թ.-ից մինչ օրս ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 21.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին

հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի (հետ)՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է նաև, որ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 12.04.2022թ.-ին ժամը 09:30-ին:

Հրավերի 8.3-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ հրավերով սահմանվում է, որ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին: Աճուրդի ընդհանուր տևողությունը պետք է լինի 30 րոպե: Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել նաև, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, ապա գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ընթացակարգի շրջանակներում պայմանագիր չկնքելու հիմքով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով 01.04.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ից 23-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Ջուզեպպե» ՍՊԸ-ն, սակայն Հանձնաժողովը ուսումնասիրելով «Ջուզեպպե» ՍՊԸ-ի հայտը, պարզել է, որ Մասնակիցը 06.04.2022թ.-ի դրությամբ ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 5-րդ, 13-րդ, 16-րդ և 23-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի:

eauction@armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 3-րդ, 4-րդ, 6-ից 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Ջուզեպպե» ՍՊԸ-ն կատարել է գնային առաջարկի նվազեցում, սակայն որի արդյունքում «Ֆոտոն» ՍՊԸ-ն է ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից: www.gnumner.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն 06.04.2022թ.-ից մինչ օրս ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 4 արձանագրությունը, eauction@armeps.am և www.gnumner.am կայքերը՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն 06.04.2022թ.-ից մինչ օրս ընդգրկված լինելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իրավունք չուներ հայտ ներկայացնել և մասնակցել հայտարարված գնման ընթացակարգին, որի արդյունքում խախտվել է էլեկտրոնային աճուրդի անցկացման բնականոն ընթացքը:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և պետք է այն բավարարել մասնակի՝ 3-րդ, 4-րդ, 6-ից 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտերը բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների պահանջի մասով՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերը հիմնավոր են, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 21.04.2022թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/73 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/114» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 6-ից 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտերը բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**